

րենէն կարող ըլլայ օտարագրի մը լաւ եւ անսխալ դատաստան ընել այն պատմագրին ոճոյն վրայ որ Ազերբեյան Հ. Մկրտչին պէս անձ մը կը վկայէր : « Յատուկ եւ ընտիր հայկաբանութեամբ » զըրւած է : Հայերէն ընագիրն որ տպուի, այս եւ ասոնց նման խնդիրները անշուշտ դիւրաւ պիտի պարզուին :

Ռ. Ա. ԵՐԱՄԵԱՆ,

Աշ. Արեւ. Վարժարանին,

de style rare et remarquable. Nous espérons que, lorsque le texte arménien sera publié, ces questions seront mieux discutées.

R.-A. ERAN,

Elève de l'Institution Polyglotte.

ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՆԴԵՍ ԲԱԳԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՅՄԱՆ ԱՂԵՐԱՆԴՐՈՒՐ, ԿԱՍՏԵՐ ՌՈՒՍԱՆ :

Սեպտեմբեր ամսոյս մէջ Փարիզու՝ մանաւանդ րէ բոլոր եւրոպայի՝ մեծ լուրը Ռուսաց կայսեր օժման եւ քաղաքորութեան հանդէսն էր . ազգային լրագիրք ալ մանրամասն գրութեամբ տեղեկութիւն տուին մերագնեայց այն հանդիսին զվսաւոր պարագաներուն վրայ :

Մենք գոհ ըլլանք ղենելով հոս Աղեքսանդրի Կայսեր կենդանագիրը, հետեւ ալ կարճ ի կարճոյ տեղեկութիւն մը, փոյք չընելով՝ որպէս միշտ՝ այնպիսեաց ոմանց խօսքերուն որ չեն յիշեր կամ չեն գիտեր քէ մեր ամսագիրը ոչ միայն Տաճկաստանի, այլ եւ Ռուսաստանի եւ ուրիշ երկիրներու Հայոց համար է : Անկէջ ի գատ մտքերնիս դրած ենք որ ոչք կրնայ իրաւացի մեղադրութիւն մը ընել մեզի՝ երբ առանց կողմնասիրութեան կամ շողոքորոտութեան աշխարհիս ճիւղ եւ իցէ նշանաւոր անձանց կենդանագիրներն ու վարքերը հրատարակենք՝ երբոր յարմար առիթ մը կուրենանք :

Աղեքսանդր Բ վեհափառ կայսրը ծնաւ Կալիփի 29ին (17) 1818ին : Հայրը Նիկողայոս կայսրը շատ մեծ ուրախութիւն ցուցուց անոր ծննդեան վրայ, եւ այս ուրախութիւնը իմացուցանաւ նաեւ այն եամակնէ գոր գրեց առ մտարասպօլտն Մոսքուայի Օգոստինոս այս խօսքերով՝ որ շատ կողմանէ նշանաւոր են .

« Սրբազան Տէր,

« Երկիւղի առն մահացուի ապիկարի, այլ « յուսով հաւատացեալ քրիստոնէի, տեսի ես

« զզալ հասանել րազմավտանգ ժամուն իմոցս
« կենաց : Անգիտացեալ գոր ինչ վերինն Տեսու-
« րիւն պահեալ էր ինձ, քաջալերեցի զանձն իմ
« ուխտիւ սրբութեան. եւ անդորր ոգով սպա-
« սեալ մնայի կամացն Աստուծոյ :

« Հաճեցաւ Աստուած տալ ինձ առնուլ զճաշակ
« քաղցրութեան հայր լինելոյ, եւ անտխնոյժ պա-
« հեաց զմայրն եւ գորդին : Եւ քեպէտ որ քննողն
« է սրտից՝ անկարօտ իցէ յայտարարութեան
« շնորհակալու մտաց մարդկան, սակայն միւս
« շնորհապարտ սիրտ պարտ անձին վարկանի
« փութալ ի նոյն :

« Ուխտն իմ գոր հուպ ընդ հուպ կատարեցից՝
« է կանգնել յեկեղեցւոյ Նորոյն Նրուսաղեմի
« մատուռն յանուն Աղեքսանդրի Նեւսքի. ետէր
« յիշատակի հօր խրախմտի որ զպատուակա-
« նագոյնն ինչես իւր յԱմենակալն ապսպարէ,
« զքաղղ կնոջ իւրոյ եւ գորդւոյն :

« Դու ինքն, Սրբազան Տէր, եղիցես ինձ օգնա-
« կան եւ առաջնորդ ի կատարումն ուխտիս իմոյ
« ցանկալոյ . աղօթք սրտառուէք մատուցին
« առ Աստուած վասն մօրեւ եւ որդւոյ առ ոտս
« սեղանոյն գոր կանգնէ հայր շնորհակալու, եւ
« րազմացուցէ Բարձրեայն զաւուրս կենաց
« նոցա յուրախութիւն եւ ի սպաս ծառայութեան
« իւրեանց արքային, ի պատիւ եւ յօգուտ հայրե-
« նեաց :

« Հայցմամբօրհնութեանդ ձերոյ մնամ՝ եւ այլն :
« Կայսրորդւոյն դաստիարակութիւնը յանձնուե-
ցաւ Ժուլիոսքի անունով հանձարեղ ու րազմա-

հմուտ բանաստեղծին : Անոր նետ եւ ուրիշ մեծա-
մեծներով՝ 1840ին ճանապարհորդութիւն մը
ըրաւ Աղեքսանդր Եւրոպայի գլխաւոր քաղաք-
ները, եւ ամեն տեղ իր կատարելութիւնները
յայտնեց :

Յաջորդ տարին, այսինքն 1841ին, ապրի-
լի 28ին (16) պսակուեցաւ Գերմանիոյ Հասնե-
ճարմըրատի մեծ շքան աղջկանը նետ՝ որ ըսուե-
ցաւ Մարիամ Աղեքսանտրովնա . որ եւ ծնած է
օգոստոսի 8ին 1824ին :



Աղեքսանդր Բ, Կայսր Ռուսաց .

Հինգ գաւակ ունի, որ ասոնք են .
Ա. Նիկողայոս Աղեքսանտրովիչ, Յեսարնվիչ
(այսինքն ժառանգ կայսերութեան), որ ծնաւ
սեպտեմբերի 20ին (8) 1845 :

Բ. Աղեքսանդր Աղեքսանտրովիչ, ծնեալ ի
10 մարտի (25 փետր.) 1845 :

Գ. Վլատիմիր Աղեքսանտրովիչ, ծնեալ ի
22 (10) ապրիլի 1847 :

Դ. Աղեքս Աղեքսանտրովիչ, ծնեալ ի 14 (2) յուն-
վարի 1850 :

Ե. Մարիամ Աղեքսանտրովնա . ծնեալ ի
17 (5) հոկտեմբերի 1855 :